Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ, ԿԵՍԳԻՇԵՐԻՑ ՀԵՏՈ

(1 հունվարի 2000 թ.)

Անհուն ուրախություն և բերկրանք եմ ապրում այս պահին, երբ բոլորս միասին եկեղեցականաց մեր դասի հետ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության հետ համախումբ, հավաքվել ենք լուսեղեն այս կամարների, այս եվիրական հարկի տակ՝ Նոր տարվա շեմին մեր աղոթքն առ Աստված բարձրացնելու, առ Երկնավոր Հայրը մեր և հայցելու, որ տարին այդ լինի բարերար մեր ժողովրդի համար, որ այն օրհնաբեր լինի Հայոց աշխարհի համար: Առաջին տարին է, որ որպես Հայրապետ Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Մեղանի առաջ, աղոթք եմ վերառաքում առ Տերն մեր և հավատում եմ, որ մեկամսյա ձեր աղոթքները, մեր հայցն ու խնդրվածքը կամար պիտի կապեն Նոր տարվա շեմին, որի միջով անցնող յուրաքանչյուր հայորդի պիտի սրբի, մաքրագործի իր զգացումները և, որպես բարի հատկություններով առլեցուն անձ, անհապ և Աստուծո արարած, պիտի մուտք գործի Նոր տարուց ներս՝ բարի զգացումներով շաղախելու հոգու և մտքի, սրտի և ձեռքի իր բոլոր գործերն ու արարքները, որոնք պիտի շենացնեն հայրենիքը մեր, որոնք պիտի զորացնեն և՛ Եկեղեցին Հայոց, և՛ համայն հայ ժողովուրդն ի Սփյուռս աշխարհի: Նոր տարվա առաջին այս աղոթքը թող թև առնի և մուտք գործի յուրաքանչյուր հայ օջախից ու ընտանիքից ներս՝ լույսով ու ջերմությամբ լեցնելու հայոց հարկերը, որպեսզի Տիրոջ ամեն ողորմությունը, Տիրոջ սերը և խաղաղությունը բնակություն հաստատեն՝ աղոթք, խաղաղություն և երջանկություն բերելով այդ հարկի տակ կայք և բնակություն հաստատած ժողովրդի զավակաց:

Մեր աղոթքն է, որ Տերն իմաստությամբ շնորհազարդի հայրենի մեր պետությունը, սիրով շաղախի հոգիները հայոց մեջ, ազատի մեզ ամեն տեսակ անպարկեշտությունից, քինախնդրությունից, չար ու վատ զգացումներից: Թող Աստուծո բարի հայացքը միշտ Հայոց աշխարհի վրա լինի՝ պահելով ու պահպանելով անվրդով ու ապահով, շեն ու պայծառ:

Եկեք բոլորս միասին Նոր տարվա այս առաջին ժամին սրտաբուխ մեր հայցը վերառաքենք առ Աստված և խնդրենք Ամենակալ Տիրոջից, որ կյանքի շավիղներում առաջնորդի մեր ընթացքը, որպեսզի մենք միշտ բարու մեջ քայլելով՝ գոհություն և փառք մատուցանենք Ամենակալ Աստծուն այժմ և հավիտյանս. ամեն: